

ՄՕՐՍ

Դուն Անահիտն ես կեանքիս տաճարին:
Ինչ փոյթ որ յոգնած ու ալ ծերացած,
Ինչ փոյթ կնճռոտած քու այս ճակատին
Կեանքը դանակով հետքեր է թողած:

Ինչպէս նաւերը կայքէն կը մեկնին
Իրենց ետեւէն թողնելով հետքեր,
Ճակատըդ այնպէ՛ս է մայր իմ անգին
Խոցուած վերքերու խորունկ սպիներ:

Տաժանքը կեանքի ծանրը է կշռեր
Քու ճահելութեան հզօր ուսերուն,
Ու հիմա ինչպէս ուռնի մը ծեր
Դեռ կը նայիս դուն խայտող ջուրերուն:

Պիտի ապրի՛ս դուն, մայր իմ պաշտելի,
Ու պիտի մնաս անջինջ յիշատակ,
Ինչպէս կը պահուի նշխարը սուրբի
Սրբատուփի մէջ, անեղծ, քօղի տակ...:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ